յայլում ունողացն զգոն. քանզի այսոքիկ և լինին և բացալինին առանց ենթակային ապականութեան. բայց անձին 'ի բաց որոշեցելոյ մարմինն ամենայն իրօք ապականի։

Դարձեալ նոքուանք վարելով է ցուցանել զանձն անմահ գոլ. քանզի թէ ոչ մարմին՝ որ և բնութեամբ լուծանող ցուցաւ և ապականացու, և ոչ որակութիւն և ոչ որակ և ոչ քանակ և ոչ այլ ինչ յապականացուացս, յայս է թէ անմահ է։ Արդ՝ բաղում են անմահութեան նորա ցուցմունք առ 'ի Պղատոնէ և յայլոց, այլ այնք պատիպատք և դժուարիմացք և հայրենի դիտելիք նոցա՝ որ յայնսն են մեռեալք մակացութիւնսն։ Բայց մեզ բաւական է առ 'ի ցուցումն անմահութեան նորա՝ ասասուածայնոց ասացելոց վարդապետութիւնք՝ հաւատարմութիւն յինքեանէ ունելով՝ վասն ասասուածաշունչ գոլոյն։ Իսկ որք ոչն ընդունին զգիրս քրիստոնէից, բաւական է նոցա ցուցանելն զոչինչ գոլն նմա (անձին) յապականացուացս. քանզի թէ ոչ ինչ է յապականացուացս՝ անապական է և անմահ. և զայս բաւական համարեալ՝ թողցուք։

Ի ՎԱՐԴՆ ԵՐԳ ՍԻՐՈՂԻ

Սիրտ իմ անդադար եղև սիրահար,
Ուռնէ գիս աւար. չըրջիմ խնդագար. վարդ, վարդ, վարդ։
Իմ սիրական վարդ, արա ինձ զբաարթ
Ցեսցդ եմ՝ աղքատ, իմ աննըման վարդ. վարդ, վարդ, վարդ։
Բամ ցաւած խոցով ազաչեմ սիրով,
Լեր ինձ ապահով, իմ բերկրական վարդ. վարդ, վարդ վարդ։
Երեսըդ պայծառ, ծով աչքերըդ վառ,
Ունքերըդ կամար, մոլորեմ ինձ վարդ. վարդ, վարդ, վարդ։
Լալով աղաչեմ, սիրով պաղատեմ,
Ցաւերըս ասեմ, մին ճար արա վարդ. վարդ, վարդ, վարդ։
Ի սիրոյ քոյ եմ սիրով բողբեմ
Քեզ մեռանիմ՝ արդ, արա ինձ զբաարթ, վարդ, վարդ, վարդ։

ՆՈՐ ՔՆԱՐ

digitised by A.R.A.R.@